բաբերութեամբ, թողնելով մանրամասնութիւնները։

Վերջին ժամանակներում Բ. Դուռը, տեսնելով, որ իր շրջաբերականները Տունիսի հարցի մասին մնում են առանց պատասխանի, դիմեց գերմանական և աւստրիական կառավարութիւններին, խնդրելով նրանց միջամտութիւնը։ Բայց Գերմանիա և Աւստրիա ուղղակի պատասխանեցին, որ նրանք Ֆրանսիայի կողմն են հակված և որ Թիւրքիայի պահանջները անհիմն են համարում։ Թիւրքիայի պահանջներին ընդդիմադրելով, ֆրանսիան պաշտօնական դօկումենտ ներկայացրեց, այն է Թիւրքաց արտաքին գործերի մինիստրի շրջաբերականը, որ գրված է 1864 թուականին այն ժամանակվայ դեսպանի անունով։ Այդ դօկումենտի մէջ Թիւրքիան ուրախութիւն է յայտնում, որ ֆրանսիական երկիրների մէջ Ալժիրիայում և Թիւրքաց կայսրութեան մէջ կայ Տունիսի անկախ իշխանութիւնը և որ թէ նա չը լինէր, հարկաւոր կը լինէր արհեստական ճանապարհով մի այդպիսի իշխանութիւն ստեղծել։

Մեսօպօտամիայի մէջ երևցած ժանտախտի մասին Կ. Պօլսի առողջապահական բաժինը հրատարակեց Բաղդադից ստացված հեռագիրները, որոնցից երևում է, թէ 4,000 բնակիչներ առանձնացած են զանազան անապատների մէջ և դրա շնորհիւ Նեջեֆի մէջ մեռնողների թիւը իւրաքանչիւր օր 56 աւելի չէ լինում։ Այն տեղերի մէջ, ուր ժամանակաւորապէս բնակեցրած են տեղացիները, ժանտախտը վերջացել է։ Առողջապահական բաժինը յոյս ունի շուտով ոչնչացնել ժանտախտը։

„Բէյրութի ընկերութեանը հեռագրում են, որ մի քանի պետութիւններ ցանկութիւն են յայտնել գրաւած երկիրները յունական թագաւորին յանձնել և ոչ թէ Յունաստանին, որպէս զի դաշնագրութիւնը կարելի լինի ոչնչացնել, եթէ Յունաստանի մէջ յեղափոխութիւն պատահի և այդ երկիրը հանրապետական ձև ստանայ։ Բ. Դուռը մտադիր է Յունաստանից պահանջել մի խոստմունք, որ ապահոված լինի պետութիւններից, թէ Յունաստանը այլ ևս չի ձգտի իր հետ նոր երկիրներ միացնել։ Ասում են, որ բրիտանական կառավարութիւնը, իմանալով Բ. Դրան այդ մտադրութիւնը, առաջարկեց միւս պետութիւններին մերժել Թիւրքիայի ցանկացած ապահովութիւնը։

ԻՏԱԼԻԱ

Ֆլօրենցիայից լրագիրներին հաղորդում են մայիսի 13-ից։ Ֆրանսիայի և Տունիսի մէջ կապված դաշնագրութեան մասին ստացված լուրերը գրգռեցին իտալացիների պատրիոտական տրամադրութիւնը։ Ինչպէս իտալացիները յայտնի են նրանով, որ շատ յիմարութիւններ են անում, բայց երբէք նրանց չեն կատարում և այս անգամ էլ Ֆրանսիայի և Իտալիայի մէջ բացարձակ թշնամութիւն չէր կարող սկսվել։ Իտալական պետական մարդիկը իրանց բոլոր պակասութիւնների հետ ունեն և իրանց նախորդներից ժառանգած այն արժանաւորութիւնը, որ գործերի դրութեան վրա ուղղակի են նայում և չեն ոգևորվում այնպիսի նախադասութիւններով, թէ „պէտք է վրէժ առնել ազգային պատիւը վիրաւորելու համար։“ Նրանք շատ լաւ հասկանում են, որ Իտալիան դեռ ևս թոյլ և աղքատ է և որ այժմ նա բացարձակ կռիւ Ֆրանսիայի հետ չէ կարող սկսել։ Նրա ամբողջ ուշադրութիւնը պէտք է դարձրած լինի ներքին հարցերի վրա։ Իտալիան առժամանակ պէտք է հրաժարվի եւրօպական պետութիւնների շրջանում որ և է դեր խաղալուց և մինչև անգամ երբեմն պէտք է զոհէ իր սեփական շահերը։

Տարաբաղդաբար իտալական այժմեան պարլամենտը անկարող է իր միջից այնպիսի մինիստրութիւն կազմել, որ բաւականութիւն տար մեծամասնութեան ցանկութիւններին և դրա պատճառն այն է, որ իտալական պարլամենտի մէջ մի որոշ մեծամասնութիւն չը կայ։ Որոշ պրօգրամներ ունեցող կուսակցութիւնների տեղ Իտալիայի մէջ կան քիչ թէ շատ նշանաւոր քաղաքական շրջաններ, որոնք իրանց անհատական շահերն են պաշտպանում և ժամանակ առ ժամանակ որ և է նպատակին հասնելու համար միմեանց հետ միանում են և իսկոյն բաժանվում են, հէնց որ գործը կատարված է լինում։ Այսօր ընկնում է մի մինիստրութիւն, վաղը նոյն մինիստրութիւնը յաղթող է հանդիսանում։ Այս անգամ երևի մինիստրութիւնը հետևեալ կերպով կը կազմվի. նրան կը մասնակցեն Զանարդելլի, Դեպրետիս, Նիկօտերա և Կրիսպի։ Այս վերջինին կը յանձնվի արտաքին գործերի մինիստրութիւնը։ Այսպէս կազմված կառավարութիւնը ամենայարմարը կը լինի ներկայ րոպէին։

Իտալիայի մէջ, ինչպէս ասում է պրօֆեսոր Բօնգիօ, միայն երկու կուսակցութիւններ կարող են գոյութիւն ունենալ՝ առաջադէմները և արմատականները, որոնց նպատակն է քաղաքական ազատութեան ամենաընդարձակ զարգացումն, բայց որոնք այդ նպատակին հասնելու համար տարբեր միջոցներ են գործ դնում։ Միայն այդ երկու կուսակցութիւնները կարող են գոյութիւն ունենալ և այն մինիստրութիւնը կարող է աջողութիւն գտնել, որի անդամները այդ երկու կուսակցութիւնների գլխաւոր ներկայացուցիչները կը լինեն։ Նոր մինիստրութիւնը կարող է գոնէ մասամբ բաւականութիւն տալ երկրի պէտքերին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագիրը հաղորդում է որ Յունաստանի խնդրի, Ալբանիայի մէջ անկարգութեան և քիւրդերի անընդհատ շարժման պատճառով սուլթանը թերահաւատութեամբ է սկսել նայել Սայիդ-փաշայի վրա և կարծում են որ շուտով լինելու է մինիստրութեան փոփոխութիւն։

—Ֆրանսիական «Temps» լրագիրը ասում է որ Բ. Դուռը լուր է ստացել որ չէյխ Իբադուլլահ հաւաքեց 20,000 հոգի և պատրաստվում է արշաւանք գործել Պարսկաստանի դէմ։ Պարսկաստանի դեսպանը այդ առիթով բողոքեց Բ. Դրանը և վերջինը պատասխանեց թէ միջոցներ են գործ դրված քիւրդերի արշաւանքի կրկնվելուն առաջն առնելու համար։

—«Times» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է որ հայերի դրութիւնը Թիւրքաց Հայաստանում սարսափելի է. Անգլիական մի օֆիցեր, որ նոր է վերադարձել Հայաստանից, պատմում է որ օր չէ անցնում առանց կողոպտութիւնների և սպանութիւնների։ Շատ տեղերում բնակիչները փախնում են ցանքեր անել իրանց դաշտերի վրա։ Կաշառակերութիւնը և անգործութիւնը վարչութեան մէջ աւելի ընդարձակ դիրք է ստացել, քան թէ որ և է ժամանակ։ Բնակիչները գանգատվել չեն կարող։

—Լրագիրները հաղորդում են որ ժանտախտը Բաղդադի մէջ վերջացել է։

—Մայիսի 10 (22) կատարվեցաւ Բուխարէշտում Ռումինիայի Կարլ իշխանի հանդիսաւոր թագաւորութիւնը։ Այսուհետև Ռումինիան այլ ևս իշխանութիւն չէ, այլ թագաւորութիւն է։

—Փարիզից հեռագրում են «Русск. Кур.» լրագրին, որ Մարսէյլում կրկին տեղի ունեցաւ կօմունիստների մի ցոյց Ռուսաստանի դէմ։ Այդ ցոյցերի պատճառով մեծ իշխանուհի Ալէքսանդրա Պետրօվնա թողեց Մարսէյլի նաւահանգիստը։

—Բերլինից հեռագրում են, որ գերմանական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի իր ձեռքում մենավաճառ դարձնել ծայթող նիւթերի պատրաստութիւնը։

—Կ. Պօլսից հեռագրում են, որ Դարդանէլեան անցքը սաստիկ ամրացնում են։

—Տունիսի հետ դաշնագիրը ընդունված է ազգային ժողովից 453 ձայների բազմութեամբ մի ձայնի դէմ։

—Գրէնվիլլ հաստատեց Լօրդերի ժողովում որ Թիւրքիայի և Յունաստանի մէջ կօնվէնցիան ստորագրված է արդէն։

—Իշխան Բիսմարկ դարձեալ մի անաջողութիւն ունեցաւ պարլամենտի մէջ. Նրա առաջարկած նոր հարկը գարեջրի վրա մերժվեցաւ պարլամենտի մեծամասնութիւնից։

—Համայնքների ժողովում քննվեցաւ երկրորդ ընթերցանութեամբ իրլանդական կալուածական բիլլ, որ և ընդունվեցաւ 352 ձայներով 176 ձայնի դէմ։ Պարնէլ յայտնեց որ մասնակցելու չէ քուէարկութեանը, որովհետև բիլլը համապատասխան չէ Իրլանդիայի պահանջներին. Նա աւելացրեց որ այդ տեսակ օրէնքներով անհնարին կը լինի մի որ և է հետևանքի հասնել, մինչև որ Իրլանդիան ազատված չը լինի օտար տիրապետութիւնից։ Յայտնի չէ թէ «օտար տիրապետութիւն» բառով Պարնէլ ինչ է կամենում ասել՝ անգլիական կալուածատէրերին են արդեօք այդ օտար տիրապետութեան կազմողները, թէ նոյն իսկ անգլիական կառավարութիւնը։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

այդ խրողութիւնը մոռացութեան է տրվում։ Բանտի մէջ թունաւորեցին Սէլիկօվին, գործը քննվում է և յայտնի չէ, թէ կասկածվածի հետ ինչ են արել։ Խնդրագանատների մի խումբ մատնութիւններ է գրում Սէլիկօվի մասին, խնդրելով նրան աքսորել վարչական ձևով, բայց քննութիւնը ապացուցանում է այդ մատնութիւնների սուտութիւնը։ Սէլիկօվ իրան արդարացնելու համար պատրաստվում է Պալատին դօկումենտներ ներկայացնել, բայց նոյն խումբը հեռագրում է դատաստանական պալատին, որ դըրանք կեղծ են։ Համիդ Վէրդի օղլի վերոյիշեալ նահանգական դատարանի մէջ արած խոստովանութիւնից յետոյ նա գնում է հիւանդանոց, որտեղ պրօկուրորի օգնական Գօլուբևի ներկայութեամբ, հիւանդանոցի փէլդշէր Պօլադովի օգնութեամբ մի պրօտօկոլ է կազմվում, որի մէջ Համիդ Վէրդի օղլի նորից մեղադրում է Սէլիկօվին և նրա բարեկամներին։ Պրօկուրորի օգնականը այդ պրօտօկոլը ուղարկեց Պալատին առաջին և երկրորդ նիստերի ընթացքում, երբ Պալատը վճռեց լրացնել գործը դօկումենտներով և հարցնելով վկայ Սէլիկօվին։ Իսկ Սէլիկօվ այդ բոլոր ժամանակը նստած է բանտի մէջ և այդ բոլորի մասին հասկացողութիւն անգամ չունի։ Ժողովրդի մէջ պատմում են, որ Պալատը Վրաստանի էգզարխից մի թուղթ ըստացաւ Սէլիկօվին թշնամի կուսակցութեան խնդրքի հետ կցված, որով այդ կուսակցութիւնը խնդրում է չազատել Սէլիկօվին իբրև մի մարդու, որ վնասակար է ուղղափառութիւնը տարածելու գործին։ Անհրաժեշտ է այս բոլորին աւելացնել, որ Սէլիկօվի բարեկամները ըսպանվում են շների պէս գաղտնի դարաններից։ Մանրամասները աւելորդ է պատմել։ Այսպիսով յայտնի խումբը հալածում է Սէլիկօվին թէ կեանքի մէջ և թէ, եթէ կարելի է ասել, մահից յետոյ, նահանգական դատարանի մեղադրական վճռից յետոյ, որպէս զի թուլացնէ նրա պաշտպանութիւնը և քօղարկէ այն փաստերը, որոնց մեղադրվածը ներկայացրել էր կամ կարող էր ներկայացնել իրան արդարացնելու համար։ Եթէ մի և նոյն ժամանակ ի նկատի առնենք, որ Ելիսաւետպօլի նահանգական դատարանի մեղադրական վճիռը չէ դիմանում ոչ մի կրիտիկայի, համեմատելով գործի մէջ եղած փաստերի և դօկումենտների հետ, ուրեմն վերոյիշեալ ապաւորութիւնը կատարելապէս հասկանալի է։ Պէտք է ցոյց տալ մանրամասներից, որ վկաները հետևեալ անձինք են. 1) Պօլադօվ, որին Սէլիկօվ ուղղակի մեղադրել էր Ղազար Տարխովի սպանութեանը մասնակցելու մէջ։ Նա Ասանիձէի լրտեսն է, որին ամեն բան հաղորդում է Սէլիկօվի պաշտպանութեան մասին, այդ պաշտպանութիւնը անզօր դարձնելու համար։ Պալատին ներկայացրած է Ասանիձէին ուղարկված Պօլադօվի «գաղտնի» նամակը։ Սէլիկօվ յիշում է Պօլադօվին իրան թունաւորելու անցքի մէջ։ Պօլադօվ այն հիւանդանոցի փէլդշէր է, որտեղ Համիդ փոխում է իր ցուցմունքը։ 2) Ասանիձէ, որին զանազան իշխանութիւններին ներկայացրած գանգատներով Սէլիկօվ մեղադրում է յանցանքների մէջ պաշտօնակատարութեան ժամանակ։ Ինչպէս երևում է վերոյիշեալ նամակից Ասանիձէ և Պօլադօվ համաձայնութեամբ են գործում։ Ասանիձէ, հեռացնելով Մելիք-Ալահվերդովին այս գործի խուզարկութիւնից, նրա տեղը նշանակում է Վէգիրովին, որին հրամանքներ է տալիս, թէ ինչպէս պէտք է գործը կատարել, ասելով, թէ ինքը աւելի փորձված է։ Ասանիձէն վրացի է և երևի նա էլ այն կարծիքի է, որ Սէլիկօվ արգելում է ուղղափառութեան տարածմանը։ 3) Տէր Գալուստ Տէր-Պօղոսեան, որի դէմ քրէական գործ է սկսված մի դօկումենտ կեղծելու համար։ 4) Կանանչեվ, Մնացականով և Սիլգիրով, որոնց Սէլիկօվ շատ անգամ մեղադրել է զանազան յանցանքների, Տարխովի սպանութեան և հասարակական շահերի և հանգստութեան խանգարման մէջ։ Վէգիրօվի կատարած պօլիցիական խուզարկութեան ժամանակ (իսկ նա խրատված էր Ասանիձէից) հանդէս են գալիս պատմութիւններ կաշառման մասին, Խալիսա Ջամբար Կըզին, որի ցուցմունքը վերոյ յիշված է, փոխվում են վկաների ցուցմունքներ, որոնց մէջ նրանք յայտնում էին իրանց անգիտութիւնը։ Գործի մէջ չը կայ ոչ մի կողմնակի անձն կամ փաստ, որ մեղադրէր Սէլիկօվին։ Այս բոլոր ասածները ապացուցված են դօկումենտներով, որոնց Պալատը ընդունեց իբրև «գործնական ապացոյցներ և դօկումենտներ»։

Դատաստանական Պալատը վճռեց հարցնել Մելիք-Ալահվերդով վկային, որ ոչ մի անգամ ցուցմունք չէր տուել և կրկին ցուցմունքներ առնել Կանանչեվ, Մնացականով և Սիլգիրով վկաներից։ Այդ վկաներին հարցրին 1881 թուի մարտի 10-ին ներկայութեամբ Սէլիկօվի, որ իր խնդրքի համեմատ Նուխու բանտից տեղափոխված էր Թիֆլիսի Մետեխի բանտը։ Մելիք-Ալահվերդովի երդմամբ տուած ընդարձակ ցուցմունքները ամեն կերպ լուսաւորեցին գործը և ներկայ եղող հասարակութեան վրա մեծ տպաւորութիւն գործեցին իրանց անկեղծութեամբ և ճշմարտութեամբ և այդ ցուցմունքները ապացուցվեցան Պալատին ներկայացրած բազմաթիւ դօկումենտներով։ Կը յիշենք այստեղ մի դօկումենտի բովանդակութիւնը, որից երևում է, որ Սէլիկօվին վարչական ձևով աքսորելու մասին պօլիցիական քննութիւն էր կատարված։ Պօլիցիան հաւաքեց հրապարակի վրա մօտ 700 մարդ և յայտնեց. ով որ կամենում է Սէլիկօվի աքսորանքը, թող ամբոխից 50 քայլ հեռանայ, ով չէ կամենում, թող իր տեղը մնայ։ Այնուհետև ամբոխից բաժանվեցան միայն 40—60 մարդ, միւսները մնացին։ Դրա մասին պօլիցիան, ինչպէս ասված է դօկումենտի մէջ, պրօտօկոլ չը կազմեց, չը նայելով ահագին մեծամասնութեան պահանջին։ Մի և նոյն դօկումենտը ապացուցանում է, որ պօլիցիայի հետ ներկայ էր քընիչ Բիլձիշևսկի—և իր թարգմանի հետ գրգռում էր ամբոխին պահանջել Սէլիկօվի աքսորը։ Ինչ կը վերաբերի Սիլգիրովի, Մնացականովի և Կանանչևի ցուցմունքներին, բաւական է յիշել, որ նրանք կատարեալ ծիծաղ բարձրացրին հասարակութեան մէջ, փոխելով ցուցմունքները, հակասելով միմեանց և այլն։ Այդ ցուցմունքների ժամանակ պատկերը ծիծաղելի էր հասարակութեան համար. բայց իրաւաբանի և դատաւորի համար վկաները զզուելի էին, որովհետև դրանց շնորհիւ շատ անգամ Սէլիկօվներ և նրանց նմանները կարող են անմեղ լինել և դատապարտվել տաժանակիր աշխատանքների։

Այսպէս վերջացաւ դատաստանական քննութիւնը Թիֆլիսի դատաստանական պալատի մէջ և կողմերը դիմեցին վերջնական վիճաբանութիւններին։ Պալատի պրօկուրորի օգնական Բէկօվ, կասկածելով նահանգական դատարանի ընդունած մեղադրող հանգամանքները, իր խղճի համեմատ հրաժարվեցաւ մեղադրելուց։ Պաշտպանը հիմնվելով դօկումենտների և վկաների ցուցմունքների վրա ապացուցեց Սէլիկօվի անմեղութիւնը և խնդրեց դատարանից ազատել մեղադրվածին։ Պալատը Սէլիկօվին արդարացրեց և այդ վճիռը օրինաւոր ոյժ ստացաւ. Սէլիկօվ անյապաղ բանտից ազատվեցաւ։

Շատ հետաքրքիր է մի նշանաւոր հանգամանք. Դատաստանական պալատի նիստերի ժամանակ Սէլիկօվի գործի համար, Ելիսաւետպօլից եկել էր Թիֆլիս մի պարոն, որ Պալատի մէջ կատարվածները անյապաղ հաղորդում էր Ելիսաւետպօլ, ասում են, որ նա միշտ դուրս էր գնում Պալատի դահլիճից, երբ հարցերը լարվում էին։ Տեսնելով այսպիսի գործեր, մարդ ակամայ կը բացականչէ. արդեօք ժամանակ չէ ժողովրդի վիճակը այլ ևս չը յանձնել զանազան գրագիրներին և բաղդախնդիրներին, որոնք բաղդի բերմամբ դատաստանական պաշտօններ են ստացել և հասկացողութիւն չունեն պատուի և մարդկային ազատութեան մասին։

Ա.